Վճարման մասնաբաժնով անդամների համար

Հնարավոր է՝ պարտավորված լինեք ամսական վճարել Ձեր ատամնաբուժական ծախսերի մի մասը՝ մինչև նպաստների ուժի մեջ մտնելը: Սա կոչվում է ծախսերի մասնաբաժին: Ձեր ծախսերի մասնաբաժնի չափը կախված է Ձեր եկամտից: Ծախսի մասնաբաժնի վերաբերյալ հարցերի համար դիմեք Ձեր շրջանի սոցիալական ծառայությունների գրասենյակ: Գտեք Ձեր տեղի գրասենյակ նշված հղումով՝ <https://www.dhcs.ca.gov/services/medicaid/Pages/CountyOffices.aspx>.

Ինչպես են վճարվում ատամնաբույժները

Health Net-ը վճարում է ատամնաբույժներին նշված եղանակներով.

- Մարդահաշվով վճարումներ
 - **Health Net**-ը վճարում է որոշ ատամնաբույժների ամսական որոշակի գումար **Health Net**-ի յուրաքանչյուր անդամի համար: Սա կոչվում է մարդահաշվով վճարում: **Health Net**-ը և ատամնաբույժները միասին են որոշում վճարման գումարի չափը:
- Գործարքային եղանակով վճարումներ
 - Որոշ ատամնաբույժներ մատուցում են ատամնաբուժական ինսամբ **Health Net**-ի անդամներին, այնուհետև, ուղարկում են **Health Net**-ին իրենց մատուցած ծառայությունների հաշիվը: Սա կոչվում է գործարքային վճարման եղանակ: **Health Net**-ը և ատամնաբույժները միասին են որոշում յուրաքանչյուր ծառայության արժեքը:



Չանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին
1-844-233-4522 (TTY/TDD 1-800-466-7566) հեռախոսահամարով:

Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Չանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց
նշված հղումով՝ www.hndental.com:

- Կանխավճարային համակարգ (PPS)
 - **Health Net**-ը որոշ ատամնաբույժների վճարում է ֆիքսված գումար՝ ծառայության այցելության նույն օրվա ընթացքում կատարված բոլոր ծառայությունների համար: Սա կոչվում է Կանխավճարային համակարգի (PPS) սակագին: Այս տեսակի սակագինը սովորաբար կիրառվում է դաշնային որակավորում ունեցող առողջապահական կենտրոնների (FQHC) կլինիկաների համար
- Խրախուսական վճարումներ
 - **Health Net**-ը վճարում է ատամնաբույժներին, երբ նրանք համապատասխանում են որակի որոշակի չափանիշների: Որակի այս չափանիշները ներառում են, բայց չեն սահմանափակվում նշվածով.
 - CalAIM
 - Prop 56
 - Կարիեսի ռիսկի գնահատում (CRA)
 - Ատամնաբուժական տարեկան այց (ADV)
 - Բողոքի շեմ

Health Net-ի կողմից ատամնաբույժներին վճարելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք **1-844-233-4522** (TTY **1-800-466-7566**) հեռախոսահամարին:



3. Ինչպես ստանալ ատամնաբուժական խնամք

Ծառայությունների սկիզբ

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍՉԻ ԻՄԱՆԱՔ՝ ԻՆՉՊԵՍ ԵՎ ՈՐՏԵՂ ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԽՆԱՄՔ:

Կարող եք սկսել ստանալ ատամնաբուժական ծառայություններ [Health Net](#)-ում գրանցվելու օրվանից: Միշտ Ձեզ մոտ պահեք Ձեր ատամնաբուժական պլանի նույնականացման քարտը, Medi-Cal-ի նպաստների նույնականացման քարտը (BIC) և ատամնաբուժական ապահովագրության այլ քարտերը: Երբեք թույլ մի տվեք, որ որևէ մեկը օգտագործի Ձեր [Health Net](#)-ի նույնականացման քարտը կամ BIC քարտը: Ատամնաբույժները կոչվում են նաև ատամնաբուժական ծառայությունների մատակարարներ:

Նոր անդամները պետք է ընտրեն մեր ցանցում առաջնային բուժման ատամնաբույժ (PCD): [Health Net](#) ցանցը մեզ հետ համագործակցող ատամնաբույժների խումբ է: Դուք պետք է ընտրեք PCD [Health Net](#)-ի անդամ դառնալուց հետո 30 օրվա ընթացքում: Եթե չընտրեք PCD, մենք Ձեր փոխարեն կընտրենք:

Կարող եք ընտրել նույն PCD-ն կամ տարբեր PCD-ներ [Health Net](#)-ում գրանցված ընտանիքի բոլոր անդամների համար:

Եթե ունեք ատամնաբույժ և ցանկանում եք շարունակել նրա մոտ կամ ցանկանում եք գտնել նոր PCD, կարող եք նայել ատամնաբուժական ծառայությունների Մատակարարների ցանկը: Այնտեղ առկա է մեր պլանային ցանցի բոլոր PCD-ների ցանկը: Ատամնաբուժական Մատակարարների ցանկը ներառում է այլ տեղեկություններ, որոնք կօգնեն Ձեզ ընտրության հարցում: Եթե Ձեզ անհրաժեշտ է ատամնաբուժական Մատակարարների ցանկը, զանգահարեք [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին: Կարող եք նաև գտնել ատամնաբուժական Մատակարարների ցանկը մեր կայքում նշված հղումով՝ www.hndental.com

Եթե չեք կարող ստանալ Ձեզ անհրաժեշտ խնամքը մեր ցանցի գրանցված ատամնաբուժական մատակարարից, Ձեր PCD-ն պետք է դիմի [Health Net](#)-ին հաստատում Ձեզ ցանցից դուրս մատակարարի մոտ ուղարկելու համար:

Կարդացեք այս գլխի մնացած մասը՝ PCD-ների, մեր ատամնաբուժական մատակարարների ցանցի և մեր ատամնաբուժական մատակարարների ցանցի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար:

Երբ զանգահարեք Ձեր PCD-ի հետ այցի համար, հեռախոսազանգին պատասխանող անձին ասեք, որ [Health Net](#)-ի անդամ եք: Տրամադրեք Ձեր ատամնաբուժական պլանի ID-ի համարը: Ձեր ատամնաբուժական այցից լավագույնս օգտվելու համար.

- Զեզ մոտ ունեցեք Ձեր Medi-Cal նպաստների նույնականացման քարտը (BIC)



- Ձեզ մոտ ունեցեք Ձեր ատամնաբուժական պլանի նույնականացման քարտը
- Ձեզ մոտ ունեցեք Ձեր Կալիֆորնիայի վավեր նույնականացման քարտը կամ վարորդական իրավունքը
- Իմացեք Ձեր սոցիալական ապահովության համարանիշը
- Ձեզ մոտ ունեցեք Ձեր դեղերի ցանկը
- Պատրաստ եղեք խոսել ձեր առաջնային բուժման ատամնաբույժի (PCD) հետ Ձեր կամ Ձեր երեխաների մոտ նկատած ցանկացած ատամնաբուժական խնդրի մասին:

Վստահ եղեք զանգահարել Ձեր PCD-ի գրասենյակ, եթե ուշանալու եք կամ չեք կարող ներկայանալ Ձեր այցին:

Ձեր այցի նշանակումը

Եթե չունեք հնարավորություն հասնել ապահովագրված ծառայությունների Ձեր այցին և այնտեղից վերադառնալ, մենք կարող ենք օգնել Ձեզ կազմակերպել փոխադրում: Այս ծառայությունը կոչվում է ոչ անհետաձգելի բժշկական փոխադրում և նախատեսված չէ անհետաձգելի իրավիճակների համար: Նման տեսակի փոխադրումը հասանելի է այն ծառայությունների և այցերի համար, որոնք կապված չեն անհետաձգելի բուժօգնության ծառայությունների հետ և կարող են անվճար հասանելի լինել Ձեզ համար: Անցեք Գլուխ 4 (Նպաստներ և ծառայություններ) և վերանայեք «Ոչ անհետաձգելի բժշկական փոխադրում» բաժինը:

Ընթացակարգային ատամնաբուժական խնամք

Բերանի խոռոչի առողջությունը ընդհանուր առողջության և բարեկեցության կարևոր մաս է կազմում: [Health Net](#)-ը հորդորում է, որ երեխաները սկսեն այցելել ատամնաբույժին իրենց առաջին ատամից կամ առաջին ծննդյան օրվանից սկսած: Ընթացակարգային ատամնաբուժական խնամքը կանոնավոր կատարվող ատամնաբուժական խնամք է: [Health Net](#)-ը հատուցում Ձեր PCD-ի կողմից ընթացակարգային խնամքի համար: Որոշ ծառայություններ կարող են ուղղորդվել մասնագիտացված ատամնաբույժների մոտ, իսկ որոշ ծառայությունների համար կարող է պահանջվել նախնական հաստատում (նախնական թույլտվություն):

Ատամնաբուժական առողջության նախնական գնահատման այց

Որպես [Health Net](#)-ի նոր անդամ՝ կարևոր է ունենալ ատամնաբուժական առողջության նախնական այց Ձեր PCD հետ՝ գրանցվելուց հետո առաջին 90 օրվա ընթացքում: Ձեր PCD-ն կուսումնասիրի բերանի խոռոչի վիճակը և կորոշի Ձեր ատամնաբուժական կարիքները: Ձեր PCD-ն կգնահատի Ձեր բերանի խոռոչի խնամքի կարիքները և կմշակի բուժման պլան՝ Ձեր ատամները, լսողը և բերանի խոռոչը լավ վիճակում պահելու համար: Բերանի խոռոչի առողջության վերաբերյալ տեղեկություններ և խորհուրդներ ևս անվճար հասանելի են [Health Net](#)-ի կայքում՝ www.hndental.com

Ձեր PCD-ի տվյալները ներառված են Ձեր բարի գալուստի նամակում և հասանելի են անդամների պորտալում: Եթե Ձեր PCD-ի հետ նախնական ատամնաբուժական առողջության նախնական այց նշանակելու համար օգնության կարիք ունենաք, զանգահարեք Անդամի ծառայությունների սպասարկման բաժին [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին:



Վերցրեք Ձեզ հետ Medi-Cal BIC-ը և [Health Net](#)-ի ID քարտը այցին գնալիս: Լավ գաղափար է ատամնաբուժական առողջության նախնական այցին ձեռքի տակ ունենալ դեղերի և հարցերի ցանկ: Ձեր այցի ժամանակ Ձեր PCD-ն կարող է տալ հարցեր Ձեր առողջական պատմության վերաբերյալ կամ խնդրել լրացնել հարցաթերթիկ: Պատրաստ եղեք խորհրդակցել Ձեր PCD-ի հետ Ձեր առողջական կարիքների և մտահոգությունների մասին:

Եթե ուշանալու եք կամ չեք կարող ներկայանալ Ձեր նշանակված այցին, անպայման զանգահարեք Ձեր PCD-ի գրասենյակ և տեղեկացրեք նրանց:

Ապահովագրվող ծառայություններ

Ատամնաբուժական բոլոր ծառայությունները պետք է համապատասխանեն Medi-Cal-ի պահանջներին, որպեսզի հատուցվեն: Երեխաների համար հնարավոր ապահովագրվող ատամնաբուժական ծառայություններն են.

- Հետազոտություններ և ռենտգեն հետազոտություններ
- Մաքրումներ
- Ֆտորային բուժումներ
- Հերմետիկ նյութեր
- Պլոմբավորումներ
- Ատամների պսակներ
- Ատամի հեռացում
- Արմատամիջուկի բուժում
- Բրեկետներ

Մեծահասակների համար հնարավոր ապահովագրվող ատամնաբուժական ծառայություններն են.

- Հետազոտություններ և ռենտգեն հետազոտություններ
- Մաքրումներ
- Խորը մաքրումներ (ատամնաքարի և կարիեսի մաքրում և արմատի շուրջ մաքրում)
- Ֆտորային բուժումներ
- Պլոմբավորումներ
- Ատամների պսակներ
- Արմատամիջուկի բուժում
- Ատամի հեռացում
- Լրիվ և մասնակի պրոթեզներ
- Բժշկական ցուցումներով պահանջվող ատամնաբուժական այլ ծառայություններ

Երեխաների և մեծահասակների ատամնաբուժական ծառայությունների ամբողջական ցանկի համար կարդացեք այս ձեռնարկի Գլուխ 4-ը:

Հրատապ ատամնաբուժական խնամք

[Health Net](#)-ը հատուցում է հրատապ ատամնաբուժական խնամքի համար՝ կոտրված ատամի, կորած պլոմբի, պսակի կամ կամրջակի, ինչպես նաև ատամի բուրբ ցավի դեպքում: Եթե անհրաժեշտ է անհապաղ այցելել ատամնաբույժի, սակայն անհետաձգելի իրավիճակ չէ, հրատապ բուժման այցերը հասանելի են 72 ժամվա ընթացքում:

Սովորական աշխատանքային ժամերի ընթացքում օգնության համար զանգահարեք Ձեր ատամնաբույժին: Եթե աշխատանքային ժամերից դուրս է, փորձեք նախ զանգահարել Ձեր ատամնաբույժին: Եթե չկարողանաք կապ հաստատել Ձեր ատամնաբույժի հետ, զանգահարեք [Health Net](#)-ի գրասենյակ ցանկացած ժամանակ [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին:



Անհետաձգելի ատամնաբուժական խնամք

Health Net-ը հատուցում է անհետաձգելի ատամնաբուժական խնամքի համար: Ատամնաբուժական անհետաձգելի խնդիրը կարող է լինել ցավ, արյունահոսություն կամ այտուց, որը կարող է վնասել Ձեզ կամ Ձեր ատամները անմիջապես չբուժելու դեպքում: Անհետաձգելի ատամնաբուժական խնամքը հասանելի է ամեն օր 24/7 սկզբունքով: Անհետաձգելի բուժօգնություն ստանալու համար **Health Net**-ի հաստատում անհրաժեշտ չէ:

Սովորական աշխատանքային ժամերի ընթացքում օգնության համար զանգահարեք Ձեր ատամնաբույժին: Եթե աշխատանքային ժամերից դուրս է, փորձեք նախ զանգահարել Ձեր ատամնաբույժին: Եթե չկարողանաք կապ հաստատել Ձեր ատամնաբույժի հետ, զանգահարեք **Health Net**-ի գրասենյակ ցանկացած ժամանակ **1-844-233-4522** (TTY **1-800-466-7566**) հեռախոսահամարին:

Կարող եք նաև զանգահարել 911 համարին կամ գնալ մոտակա հիվանդանոց: Եթե տնից հեռու եք, կարող եք գտնել Ձեր մոտակայքում ատամնաբույժ՝ անհետաձգելի բուժօգնություն ստանալու համար: **Health Net**-ի հետ պայմանագիր չունեցող ատամնաբույժները կարող են զանգել Ձեզանից անհետաձգելի բուժօգնության համար: Եթե վճարեք անհետաձգելի բուժօգնության համար, մենք կվերադարձնենք գումարը:

Բժշկական անհետաձգելի իրավիճակների համար զանգահարեք **911** համարիմ կամ գնացեք մոտակա շտապ բուժօգնության բաժանմունք:

Օգնության անհրաժեշտության դեպքում զանգահարեք **1-844-233-4522** (TTY **1-800-466-7566**) հեռախոսահամարին: Մենք աշխատում ենք **երկուշաբթիից ուրբաթ, 8:00 a.m.-ից մինչև 5:00 p.m.**: Չանգն անվճար է:

Որտեղ ստանալ ատամնաբուժական խնամք

Ատամնաբույժներ

Դուք կընտրեք առաջնային բուժման ատամնաբույժ (PCD) **Health Net**-ի ատամնաբուժական Մատակարարների ցանկից: Ձեր PCD-ն պետք է լինի գրանցված ատամնաբույժ: Ինչը նշանակում է, որ ատամնաբույժը հասանելի է մեր ցանցում: Մեր ատամնաբուժական մատակարարների ցանցի պատճենը ստանալու համար զանգահարեք **1-844-233-4522** (TTY **1-800-466-7566**) հեռախոսահամարին:

Ձեր խնամքի մեծ մասը կստանաք Ձեր PCD-ից: Ձեր PCD-ն կտրամադրի ընթացակարգային ատամնաբուժական խնամքի մեծ մասը: Անհրաժեշտության դեպքում Ձեր PCD-ն կուղղորդի մասնագետների մոտ:

Դուք պետք է նաև զանգահարեք, եթե ցանկանում եք ստուգել՝ արդյոք Ձեզ նախընտրած PCD-ն ընդունում է նոր բուժառնություն, թե ոչ:

Եթե որոշակի խնդիրների համար դիմել եք ատամնաբույժի **Health Net**-ի անդամ դառնալուց առաջ, կկարողանաք շարունակել այցելել այդ ատամնաբույժին: Սա կոչվում է խնամքի անընդհատություն: Խնամքի անընդհատության մասին կարող եք իմանալ ավելին այս ձեռնարկի էջ 24-ում: Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք **1-844-233-4522** (TTY **1-800-466-7566**) հեռախոսահամարին:



Ատամնաբուժական մատակարարների ցանկ

Health Net ատամնաբուժական ծառայությունների մատակարարների ցանկում թվարկված են **Health Net** ցանցում գրանցված մատակարարներ: Ցանցը **Health Net**-ի հետ համագործակցող մատակարարների խումբ է:

Health Net-ի ատամնաբուժական ծառայությունների մատակարարների ցանկը ներառում է ատամնաբույժների, ատամնաբուժական մասնագետների և Դաշնային որակավորում ունեցող առողջապահական կենտրոնների (FQHC-ներ) նման կլինիկաների անուններ:

Ատամնաբուժական ծառայությունների մատակարարների ցանկը ներառում է անուններ, մատակարարների հասցեներ, հեռախոսահամարներ, աշխատանքային ժամեր և հասանելի լեզուներ: Այնտեղ նշված է նաև, թե արդյոք մատակարարն ընդունում է նոր բուժառուներ, նշված են մատակարարի մշակութային և լեզվական կարողությունները (այսինքն՝ մատակարարի կամ թարգմանիչների կողմից առաջարկվող լեզուները, այդ թվում՝ ամերիկյան ժեստերի լեզուն): Այն նաև նշում է շինության ֆիզիկական հասանելիության մակարդակը, ինչպես օրինակ՝ կայանատեղին, թեքահարթակները, բազրիքներով աստիճանները և հասանելի սանհանգույցները:

Ատամնաբուժական ծառայությունների մատակարարների ցանկն առցանց կարող եք գտնել նշված հղումով՝ www.hndental.com

Ատամնաբուժական ծառայությունների մատակարարների ցանկի տպած օրինակի համար զանգահարեք **1-844-233-4522** (TTY **1-800-466-7566**) հեռախոսահամարին:

Ատամնաբուժական մատակարարների ցանց

Ատամնաբուժական մատակարարների ցանցը ատամնաբույժների և հատուկ մասնագիտացված ատամնաբույժների խումբ է, որը համագործակցում է **Health Net**-ի հետ Medi-Cal-ի անդամներին Medi-Cal-ի ատամնաբուժական ապահովագրությունով ծառայություններ մատուցելու համար:

Ցանցի ներսում

Դուք կօգտվեք **Health Net** ցանցի ատամնաբույժների ծառայություններից Ձեր ատամնաբուժական խնամքի կարիքների համար: Կստանաք կանխարժեքիչ և պլանային խնամք Ձեր PCD-ից: Դուք նաև կօգտվեք մեր ցանցային մասնագետների և այլ մատակարարների ծառայություններից:

Ցանցային մատակարարների ատամնաբուժական մատակարարների ցանկ ստանալու համար զանգահարեք **1-844-233-4522** (TTY **1-800-466-7566**) հեռախոսահամարին: Կամ կարող եք գտնել ատամնաբուժական մատակարարների մեր ցանկն առցանց նշված հղումով՝ www.hndental.com:

Հրատապ կամ անհետաձգելի ատամնաբուժական խնամքի համար զանգահարեք Ձեր PCD-ին: Եթե այց կազմակերպելու հետ կապված օգնության կարիք ունենաք կամ լինեք Ձեր բնակության վայրից դուրս, զանգահարեք **1-844-233-4522** (TTY **1-800-466-7566**) հեռախոսահամարին:



Բժշկական անհետաձգելի խնամքի համար զանգահարեք **911** համարին կամ այցելեք մոտակա շտապօգնության բաժանմունք:

Ցանցից դուրս

Ցանցից դուրս մատակարարներ են համարվում, երբ չունեն [Health Net](#)-ի հետ համագործակցելու համաձայնագիր: Բացառությամբ հրատապ կամ անհետաձգելի բուժման դեպքերի, հնարավոր է՝ պարտավորված լինեք վճարել ցանցից դուրս մատակարարների կողմից մատուցվող խնամքի համար: Եթե Ձեզ անհրաժեշտ են ապահովագրված ատամնաբուժական խնամքի ծառայություններ, կարող եք ստանալ դրանք ցանցից դուրս անվճար այնքան ժամանակ, քանի դեռ դրանք բժշկական ցուցումներով պարտադիր են և հասանելի չեն ցանցում:

Եթե ցանցից դուրս ծառայությունների հետ կապված օգնության կարիք ունենաք, զանգահարեք [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին:

Եթե լինեք մեր սպասարկման տարածքից դուրս և ոչ անհետաձգելի խնամքի կարիք ունենաք, անմիջապես զանգահարեք Ձեր PCD-ին: Կամ զանգահարեք [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին:

Ցանցից դուրս կամ տարածքից դուրս խնամքի վերաբերյալ հարցերի դեպքում զանգահարեք [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին:

Առաջնային բուժօգնության ատամնաբույժ (PCD)

Ձեր առաջնային բուժման ատամնաբույժը (PCD) լիցենզավորված ատամնաբուժական ծառայության մատակարար է, ում այցելում եք Ձեր ատամնաբուժական խնամքի մեծ մասի համար: Ձեր PCD-ն նաև օգնում է ստանալ Ձեզ անհրաժեշտ խնամքի այլ տեսակներ: Նոր անդամները պետք է ընտրեն PCD [Health Net](#)-ում գրանցվելուց հետո 30 օրվա ընթացքում: Դուք կարող եք ընտրել ընդհանուր ատամնաբույժ՝ որպես PCD:

Դուք կարող եք նաև ընտրել դաշնային որակավորում ունեցող առողջապահական կենտրոն (FQHC), համայնքային կլինիկա, Ամերիկայի հնդկացիների առողջապահական կլինիկա կամ այլ առաջնային բուժման հաստատություն, որն առաջարկում է ատամնաբուժական ծառայություններ՝ որպես Ձեր PCD, եթե գտնվում են [Health Net](#) ցանցում, և եթե որակավորվում եք նրանց ծառայությունների համար: Սրանք կենտրոններ են, որոնք գտնվում են ատամնաբուժական խնամքի շատ ծառայություններ չունեցող տարածքներում:

Դուք կարող եք ընտրել նույն կամ տարբեր PCD [Health Net](#)-ի անդամ հանդիսացող Ձեր ընտանիքի բոլոր անդամների համար:

Եթե չընտրեք PCD 30 օրվա ընթացքում, [Health Net](#)-ի հետ համագործակցող անդամների խնամքի ատամնաբույժը կընտրի PCD Ձեզ համար:

Ձեր PCD-ն.



Զանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

[1-855-388-6257](tel:1-855-388-6257) (TTY/TDD [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարով:

[Health Net](#)-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Զանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահսկողվող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

- Կտեղեկանա Ձեր ատամնաբուժական կարիքների մասին
- Կպահպանի Ձեր ատամնաբուժական գրառումները
- Կտրամադրի Ձեզ անհրաժեշտ կանխարգելիչ և կանոնավոր ատամնաբուժական խնամք
- Կուղորդի (կուղարկի) Ձեզ մասնագետի մոտ անհրաժեշտության դեպքում

Կարող եք ատամնաբուժական ծառայությունների մատակարարների ցանկում փնտրել [Health Net](#)-ի ցանցային PCD: Ատամնաբուժական ծառայությունների մատակարարների ցանկն ունի [Health Net](#)-ի հետ համագործակցող FQHC-ների ցանկ:

Կարող եք գտնել ատամնաբուժական ծառայությունների մատակարարների ցանկն առցանց նշված հղումով՝ www.hndental.com: Կամ զանգահարեք [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին: Կարող եք նաև զանգահարել և պարզել, թե արդյոք Ձեզ նախընտրելի PCD-ն ընդունում է Նոր բուժառուներ:

Ատամնաբույժների ընտրություն

Դուք բոլորից լավ գիտեք Ձեր ատամնաբուժական խնամքի կարիքները, ուստի, լավագույն տարբերակն է, որ Դուք ընտրեք Ձեր PCD-ին:

Լավագույն տարբերակն է ունենալ մեկ PCD, որպեսզի նա կարողանա ծանոթանալ Ձեր ատամնաբուժական խնամքի կարիքներին: Այնուամենայնիվ, եթե ցանկանում եք փոխել Նոր PCD-ի, կարող եք փոխել ցանկացած ժամանակ և որքան կամենք: Դուք պետք է ընտրեք [Health Net](#) ատամնաբուժական մատակարարների ցանցի և Նոր բուժառուներ ընդունող PCD:

Ձեր Նոր ընտրությունը կդառնա Ձեր PCD-ն փոփոխությունը կատարելուց անմիջապես հետո:

Ձեր PCD-ին փոխելու համար այցելեք նշված հղումով՝ www.hndental.com, կամ զանգահարեք [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին:

[Health Net](#)-ը կարող է փոխել Ձեր PCD-ին, եթե PCD-ն Նոր բուժառուներ չի ընդունում, դուրս է եկել մեր ցանցից կամ չի մատուցում խնամք Ձեր տարիքի բուժառուներին: [Health Net](#)-ը կամ Ձեր PCD-ն կարող են նաև խնդրել Ձեզ փոխարինել Ձեր PCD-ն Նոր PCD-ի, եթե չեք կարողանում հարմարվել կամ համաձայնության գալ Ձեր PCD-ի հետ, կամ եթե չեք ներկայանում կամ ուշանում եք այցելություններից: Եթե Ձեր PCD-ին փոխելու անհրաժեշտություն գտնենք, մենք գրավոր կտեղեկացնենք Ձեզ այդ մասին:

Եթե Ձեր PCD-ն փոխվի, և ինքներդ կատարած չլինեք փոփոխությունը, փոստով կստանաք նամակ: Այնտեղ նշված կլինի Ձեր Նոր PCD-ի անունը: PCD-ի վերաբերյալ հարցերի դեպքում զանգահարեք Անդամի ծառայությունների սպասարկման բաժին: Դուք նաև կստանաք Ատամնաբուժական պլանի անդամի նույնականացման Նոր քարտ փոստով: Այնտեղ նշված կլինի Ձեր Նոր PCD-ի անունը: Նույնականացման Նոր քարտ ստանալու հետ կապված հարցերի դեպքում այցելեք նշված հղումով՝ www.hndental.com, կամ զանգահարեք [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին:



Ատամնաբուժական ծառայություններ Ատամնաբուժական քոլեջի և համալսարանի միջոցով

Health Net-ը պայմանագրեր է կնքել Ատամնաբուժական քոլեջների և համալսարանների հետ՝ Medi-Cal բնակչությանը ծառայություններ մատուցելու համար: Եթե ստանում եք ատամնաբուժական քոլեջի կամ համալսարանի կողմից տրամադրվող ատամնաբուժական խնամք, այդ ծառայությունները կարող են մատուցվել ատամնաբուժության կամ ատամնաբուժական հիգիենայի ուսանողների և ատամնաբուժական քոլեջի բժիշկների կամ դասախոսների կողմից:

Ֆանդիպումներ և այցելություններ

Երբ Ձեզ անհրաժեշտ է ատամնաբուժական խնամք.

- Չանգահարեք Ձեր PCD-ին
- Չանգի ժամանակ ձեռքի տակ պահեք Ձեր **Health Net** ID համարը
- Եթե գրասենյակը փակ է, թողեք հաղորդագրություն՝ նշելով Ձեր անունը և հեռախոսահամարը
- Ձեր այցի ժամանակ վերցրեք Ձեր BIC և ատամնաբուժական պլանի ID քարտերը
- Անհրաժեշտության դեպքում խնդրեք **Health Net**-ին տրամադրել Ձեր հանդիպմանը հասնելու համար անհրաժեշտ տրանսպորտ
- Մինչև հանդիպումը խնդրեք **Health Net**-ին տրամադրել անհրաժեշտ լեզվական աջակցություն կամ թարգմանչական ծառայություններ՝ Ձեր այցի ժամանակ ծառայություններ ստանալու համար
- Վերցրեք նույնականացման քարտ կամ վարորդական իրավունք
- Ժամանակին ներկայացեք Ձեր հանդիպմանը
- Ամփջապես զանգահարեք, եթե չեք կարող ներկայանալ Ձեր հանդիպմանը կամ ուշանալու եք
- Անհրաժեշտության դեպքում պատրաստ պահեք Ձեր հարցերը

Վճարում

Դուք պարտավոր չեք վճարել չհատուցվող որևէ միևնույն կամ համավճար ապահովագրված ծառայությունների համար: Դուք չպետք է ստանաք հաշիվ ատամնաբույժից: Դուք կարող եք ստանալ Ծառայությունների մանրամասներ (EOB) կամ ատամնաբույժի կողմից տրված տեղեկանք: EOB-ները և տեղեկանքները հաշիվ չեն համարվում:

Եթե ստանաք հաշիվ, զանգահարեք **1-844-233-4522** (TTY **1-800-466-7566**) հեռախոսահամարին: Ներկայացրեք մեզ գանձված գումարը, ծառայության ամսաթիվը և հաշվի պատճառը:

Եթե ստանաք հաշիվ կամ Ձեզ խնդրեն վճարել համավճար, կարող եք նաև ներկայացնել



Չանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

1-855-388-6257 (TTY/TDD **1-800-466-7566**) հեռախոսահամարով:

Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Չանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

պահանջի ձևաթուղթ: Դուք պետք է մեզ գրավոր տեղեկացնեք, թե ինչու եք ստիպված եղել վճարել ապրանքի կամ ծառայության համար: Մենք կուսումնասիրենք Ձեր պահանջը և կորոշենք՝ արդյոք կարող եք ստանալ գումարի վերադարձ: Հարցերի կամ պահանջի ձևաթուղթ ինդրելու համար զանգահարեք [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին:

Ուղեգրեր

Health Net-ը չի պահանջում ուղեգրեր մասնագետի մոտ այցելելու համար: Այնուամենայնիվ, Ձեր ատամնաբույժը կարող է տրամադրել Ձեզ ուղեգիր՝ անհրաժեշտության դեպքում մասնագետի մոտ ուղարկելու համար: Ատամնաբույժը այն անձն է, ով կենտրոնանում է տամնաբուժության մեկ ոլորտի վրա: Ձեր PCD կոգնի ձեզ մասնագետ ընտրելու հարցում: Ձեր PCD-ի գրասենյակի աշխատակիցները կօգնեն Ձեզ մասնագետի մոտ այցի ժամ նշանակելու հարցում:

Ձեր PCD-ն կարող է տրամադրել Ձեզ ձևաթուղթ՝ ատամնաբույժի մոտ տանելու համար: Ատամնաբույժը կլրացնի ձևաթուղթը և կուղարկի այն Ձեր PCD-ին:

Եթե ցանկանում եք ստանալ ուղեգրերի մեր քաղաքականության պատճենը, զանգահարեք [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին:

Ձեզ ուղեգիր անհրաժեշտ չէ.

- PCD-ի այցելությունների համար
- Հրատապ կամ անհետաձգելի բուժման համար

Նախնական հաստատում (նախնական թույլտվություն)

Ինամքի որոշ տեսակների համար Ձեր PCD-ն կամ ատամնաբույժը պետք է մեզ հարցնի նախքան ինամք տրամադրելը: Սա կոչվում է նախնական թույլտվություն կամ նախնական հաստատում: Ինչը նշանակում է, որ **Health Net**-ը համաձայնում է, որ ինամքը բժշկական ցուցումներով պահանջվում է: Ատամնաբուժական ինամքը բժշկական ցուցումներով պահանջվում է, եթե այն նախատեսված է բերանի խոռոչի հիվանդությունների, վարակի և ցավի կանխարգելման և վերացման, ատամնաշարի ձևի և գործառնության վերականգնման կամ ֆիզիկական թերության կամ դիսֆունկցիայի շտկման համար: Բժշկական անհրաժեշտության դեպքում ատամնաբուժական ծառայությունները պետք է համապատասխանեն Medi-Cal ծրագրի կանոններին:

Ատամնաբուժական այս ծառայությունները պահանջում են նախնական հաստատում, նույնիսկ եթե դրանք ստանում եք **Health Net** ցանցի ատամնաբուժական մատակարարից.

- Արմատամիջուկի բուժում
- Պսակներ
- Լրիվ/մասնակի պրոթեզներ
- Խորը մաքրումներ (ատամնաքարի և կարիեսի մաքրում և արմատի շուրջ մաքրում)
- Ընդհանուր անզգայացում և ներերակային թմրեցում



Ձեր ատամնաբույժի կողմից առաջարկվող ատամնաբուժական այլ ծառայությունների համար նույնպես կարող է պահանջվել նախնական հաստատում:

Որոշ ծառայությունների համար, ինչպես օրինակ՝ մասնագիտացված ատամնաբույժի խնամքի համար, Ձեզ անհրաժեշտ է նախնական հաստատում, եթե ստանում եք խնամքը ցանցից դուրս: Մենք որոշում կկայացնենք 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ ընթացակարգային ծառայության համար, կամ 72 ժամվա ընթացքում՝ հրատապ բուժման համար:

Մենք վերանայում ենք հայտը՝ որոշելու, թե արդյոք խնամքը բժշկական ցուցումներով անհրաժեշտ է և ապահովագրված է: Մենք չենք վճարում մեր վերանայողներին՝ ապահովագրությունը կամ ատամնաբուժական ծառայությունները մերժելու համար: Եթե չհաստատենք խնամքը, պատճառի մասին Ձեզ կտեղեկացնենք:

[Health Net](#)-ը կապ կհաստատի Ձեզ հետ, եթե մեզ անհրաժեշտ լինեն լրացուցիչ տվյալներ կամ լրացուցիչ ժամանակ՝ Ձեր հայտը վերանայելու համար:

Այլ բժշկիների կարծիքներ

Ձեզ կարող է անհրաժեշտ լինել այլ բժշկի կարծիք Ձեր PCD կողմից Ձեզ համար անհրաժեշտ նշված խնամքի կամ Ձեր ախտորոշման կամ բուժման պլանի վերաբերյալ: Օրինակ՝ Ձեզ կարող է անհրաժեշտ լինել այլ բժշկի կարծիք, եթե վստահ չեք՝ Ձեզ անհրաժեշտ է նշանակված բուժումը կամ վիրահատությունը:

Այլ կարծիք ստանալու համար զանգահարեք PCD-ին: Ձեր PCD-ն կարող է ուղղորդել Ձեզ ցանցային մատակարարի մոտ երկրորդ կարծիքի համար: Կամ զանգահարեք [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին: Մենք կվճարենք երկրորդ կարծիքի համար, եթե Դուք կամ Ձեր ցանցային ատամնաբույժը դիմեք դրա համար, և եթե եձեք բերեք երկրորդ կարծիքը ցանցային ատամնաբույժից: Մեզնից թույլտվություն անհրաժեշտ չէ երկրորդ կարծիք ստանալու համար, եթե երկրորդ կարծիքի համար Ձեր ընտրած ատամնաբույժը հաստատված է: Եթե ունեք հրատապ հայտ, մենք որոշում կկայացնենք 72 ժամվա ընթացքում:

Զանգահարեք Անդամի ծառայությունների սպասարկման բաժին [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին:

Եթե մերժենք երկրորդ կարծիքի Ձեր հայտը, կարող եք բողոք ներկայացնել: Բողոքների մասին լրացուցիչ տեղեկությունների համար վերանայեք այս ձեռնարկի էջ 69-ը:



Խնամքի ժամանակին հասանելիություն

Health Net-ը պետք է ապահովի այցեր նշված ժամանակահատվածներում.

- Ընթացակարգային այցեր (ներառյալ կանխարգելիչ խնամք) – 4 շաբաթ
- Այցեր մասնագետին – 30 աշխատանքային օր (21 տարեկանից բարձր տարիքի դեպքում); 30 օրացուցային օր (21 տարեկանից ցածր տարիքի դեպքում)
- Հրատապ բուժման այցեր – 72 ժամ
- Անհետաձգելի բուժում – Պետք է հասանելի լինի 24/7 սկզբունքով

Ատամնաբուժական առողջապահության իրազեկման ծառայություններ

Ատամնաբուժական առողջապահության իրազեկման ծառայությունները կանխարգելիչ ծառայությունների և ատամնաբուժական առաջնային առողջապահական խնամքի մաս են կազմում: Health Net-ը հոգ է տանում ոչ միայն ատամների մասին: Մենք հոգ ենք տանում մեր անդամների ընդհանուր առողջության և բարեկեցության մասին: Health Net-ը հնարավորություն է տալիս հեշտությամբ և անվճար օգտվել ատամնաբուժական ռեսուրսներից և կրթական նյութերից: Դուք կարող եք գտնել ավելի շատ տեղեկություններ համայնքային ծառայությունների, ինչպես նաև մեր կողմից մատուցվող առողջապահական և բարեկեցության ծառայությունների մասին մեր առցանց կայքի հղման միջոցով՝ www.hndental.com:

Health Net-ի առողջապահական կրթության բաժինը առաջարկում է անվճար ծրագրեր, ծառայություններ և ռեսուրսներ՝ Medi-Cal անդամներին առողջ մնալու և իրենց առողջական վիճակը վերահսկելու համար: Անդամները և մատակարարները կարող են ստանալ ավելի շատ տեղեկություններ հասանելի ծրագրերի, ծառայությունների և ռեսուրսների մասին՝ այցելելով նշված հղումով՝ www.hndental.com, կամ զանգահարելով Առողջապահական կրթության տեղեկատվական գծի անվճար (800) 804-6074 (TTY՝ 1-800-466-7566) հեռախոսահամարին:



4. Նպաստներ և ծառայություններ

Ինչ է հատուցվում Ձեր ատամնաբուժական պլանով

Այս բաժնում մենք կներկայացնենք որպես **Health Net**-ի անդամ Ձեր ապահովագրվող բոլոր ծառայությունները: Ձեր ապահովագրվող ծառայություններն անվճար են այնքան ժամանակ, քանի դեռ բժշկական ցուցումներով անհրաժեշտ են: Խնամքը բժշկական ցուցումներով անհրաժեշտ է, եթե այն նախատեսված է բերանի խոռոչի հիվանդությունների, վարակի և ցավի կանխարգելման և վերացման, ատամնաշարի ձևի և գործառույթի վերականգնման, ինչպես նաև ֆիզիկական թերության կամ դիսֆունկցիայի շտկման համար:

Մենք առաջարկում ենք ատամնաբուժական ծառայությունների հետևյալ տեսակները.

Ծառայության տեսակ	Օրինակներ
▪ Ախտորոշիչ	Հետազոտություններ, ռենտգեն հետազոտություններ
▪ Կանխարգելիչ	Մաքրումներ, ֆտորային բուժումներ, հերմետիկներ (երեխաների համար)
▪ Վերականգնողական	Պլոմբավորումներ, պսակներ
▪ Էնդոդոնտիկ	Պուլպոտոմիաներ, արմատամիջուկի մաքրումներ
▪ Պարոդոնտալ	Լնդերի վիրահատություն, խորը մաքրում
▪ Շարժական պրոթեզավորում	Անհապաղ և ամբողջական պրոթեզներ, մասնակի պրոթեզներ, պրոթեզի վերաբազավորում
▪ Բերանի խոռոչի և դիմաձևոտային վիրաբուժություն	Ատամների հեռացում
▪ Օրթոդոնտիկ միջոցներ	Բրեկետներ (երեխաների համար)
▪ Լրացուցիչ	Թմրեցում, ընդհանուր անզգայացում

Կարդացեք ստորև նպաստների ամփոփ նկարագիրը և բաժիններից յուրաքանչյուրը՝ Ձեր հնարավոր ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար:



Ձանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին
1-855-388-6257 (TTY/TDD **1-800-466-7566**) հեռախոսահամարով:
Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:
Ձանգն անվճար է:
Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց
նշված հղումով՝ www.hndental.com:

Նպաստների ամփոփագիր

Ստորև մեծահասակների և երեխաների համար առամասնական նպաստների ամփոփագիրն է.

✓ Նպաստ

✗

Ոչ նպաստ

Պրոցեդուրա	Ամբողջական շրջանակ	Սահմանափակ շրջանակ	Հղիներին առնչվող	Հաստատությունում մնալը (SNF/ICF)
Բերանի խոռոչի վիճակի գնահատում (միայն 3 տարեկանից փոքրերի համար)	✓	✗	✗	✓
Նախնական հետազոտություն (3+ տարեկան)	✓	✗	✓	✓
Պարբերական հետազոտություն (3+ տարեկան)	✓	✗	✓	✓
Կանոնավոր մաքրումներ	✓	✗	✓	✓
Ֆտորային բուժում	✓	✗	✓	✓
Վերականգնողական ծառայություններ՝ պլոմբավորումներ	✓	✗	✓	✓
Պսակներ*	✓	✗	✓	✓
Ատամնաքարի և կարիեսի մաքրում և արմատի շուրջ մաքրում (խորը մաքրում)**	✓	✗	✓	✓
Պարոդոնտալ խնամք (լիզերի համար)	✓	✗	✓	✓
Առջևի շարքի արմատամիջուկի մաքրում (առջևի մաս)	✓	✗	✓	✓
Հետևի շարքի արմատամիջուկի մաքրում (հետևի մաս)	✓	✗	✓	✓
Մասնակի պրոթեզներ	✓	✗	✓	✓
Լրիվ պրոթեզներ	✓	✗	✓	✓
Հեռացումներ/Բերանի խոռոչի և դիմաձևոտային վիրաբուժություն	✓	✓	✓	✓
Շտապօգնության ծառայություններ	✓	✓	✓	✓

Բացառություններ.

*1. Նպաստ չէ 13 տարեկանից փոքր անձանց համար: Մոլյարների կամ նախամոլյարների (հետևի ատամներ) վրա պսակները կարող են ապահովագրվել բժշկական ցուցումներով պահանջի դեպքում:

**Նպաստ չէ 13 տարեկանից փոքր անձանց համար: Թույլատրելի է հատուկ հանգամանքներում:



Ձանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

1-855-388-6257 (TTY/TDD 1-800-466-7566) հեռախոսահամարով:

Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Ձանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

Հետծննդյան խնամքի երկարացման ծրագիր

Հետծննդյան խնամքի երկարացման ծրագիրը Medi-Cal անդամների համար ապահովում է ընդլայնված ապահովագրություն հղիության ընթացքում և հղիությունից հետո: Ծրագիրը երկարաձգում է [Health Net](#)-ի ապահովագրությունը հղիության ավարտից հետո մինչև 12 ամիս՝ անկախ եկամտից, քաղաքացիությունից կամ ներգաղթային կարգավիճակից, և որևէ լրացուցիչ գործողություն անհրաժեշտ չէ:

Բժշկական ցուցումներով պահանջվող ծառայությունները ներառում են ողջամիտ և անհրաժեշտ ապահովագրվող ծառայություններ, որոնք են.

- Կյանքը պաշտպանելու համար,
- Լուրջ հիվանդությունը կամ լուրջ հաշմանդամությունը կանխելու համար,
- Սուր ցավը մեղմելու համար,
- Տարիքին համապատասխան աճի և զարգացման հասնելու համար և
- Ֆունկցիոնալ կարողություններ ձեռք բերելու, պահպանելու և վերականգնելու համար:

21 տարեկանից ցածր անդամների համար բժշկական ցուցումներով պահանջվող ծառայությունները ներառում են վերը նշված բոլոր ապահովագրվող ծառայությունները, ինչպես նաև ցանկացած այլ անհրաժեշտ ծառայություններ, բուժում կամ այլ միջոցառումներ՝ թերությունները, ֆիզիկական և հոգեկան հիվանդություններն ու խնդիրները շտկելու կամ մեղմելու համար, ինչպես պահանջվում է դաշնային Վադ և պարբերական հետազոտության, ախտորոշման և բուժման (EPSDT) նպատակով: Սա ներառում է խնամք, որն անհրաժեշտ է ֆիզիկական կամ հոգեկան հիվանդությունը կամ խնդիրը շտկելու կամ թեթևացնելու կամ անդամի վիճակը՝ վատթարացումից պահպանելու համար:

EPSDT-ն ապահովում է կանխարգելիչ, ախտորոշիչ և բուժման ծառայությունների լայն շրջանակ ցածր եկամուտ ունեցող նորածնների, երեխաների և 21 տարեկանից փոքր դեռահասների համար: EPSDT-ի նպատակն ավելի մանրամասն է մշակված, քան մեծահասակների համար նախատեսված նպատակը, և նախատեսված է ապահովելու, որ երեխաները ստանան վաղ հայտնաբերում և խնամք, որպեսզի առողջական խնդիրները կանխվեն կամ ախտորոշվեն և բուժվեն հնարավորինս շուտ: EPSDT-ի նպատակն է ապահովել, որ յուրաքանչյուր երեխա ստանա անհրաժեշտ առողջապահական խնամքը, երբ դրա կարիքն ունենա.

ճիշտ խնամք ճիշտ ժամանակին և ճիշտ միջավայրում:

Ծառայությունների հաճախականություն

Ատամնաբուժական ծառայությունները հատուցվում են բժշկական ցուցումներով պահանջված լինելու դեպքում: Այնուամենայնիվ, որոշ ծառայությունների համար կան սահմանափակումներ, թե քանի անգամ կարող եք ստանալ ծառայությունը տվյալ ժամանակահատվածում: Ստորև ներկայացված են հաճախ հանդիպող ծառայություններ, որոնց համար կան սահմանափակումներ.

- Հետազոտություններ - յուրաքանչյուր 6 ամիսը մեկ (21 տարեկանից փոքր); յուրաքանչյուր 12 ամիսը մեկ (21+ տարեկան)
- Կծելու միջոցով ատամների ռենտգեն - յուրաքանչյուր 6 ամիսը մեկ
- Բերանի խոռոչի ամբողջական ռենտգեն - յուրաքանչյուր 36 ամիսը մեկ
- Պանորամիկ ռենտգեն - յուրաքանչյուր 36 ամիսը մեկ
- Ատամների մաքրում - յուրաքանչյուր 6 ամիսը մեկ (21 տարեկանից փոքր); յուրաքանչյուր 12 ամիսը մեկ (21+ տարեկան)
- Մակերեսային ֆտոր - յուրաքանչյուր 6 ամիսը մեկ (21 տարեկանից փոքր); յուրաքանչյուր 12 ամիսը մեկ (21+ տարեկան)
- Հերմետիկներ - յուրաքանչյուր 36 ամիսը մեկ (միայն 21 տարեկանից փոքր)
- Պլոմբավորումներ - յուրաքանչյուր 12 ամիսը մեկ (յուրաքանչյուր կաթնատամի համար); յուրաքանչյուր 36 ամիսը մեկ (յուրաքանչյուր մշտական ատամի համար)



Ձանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

1-855-388-6257 (TTY/TDD 1-800-466-7566) հեռախոսահամարով:

[Health Net](#)-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Ձանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահսկողովող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

- Ատամնապսակներ - յուրաքանչյուր 5 տարին մեկ (13+ տարեկան)
- Խորը մաքրում (ատամնաքարի և կարիեսի մաքրում/արմատի շուրջ մաքրում) - յուրաքանչյուր քառորդի համար յուրաքանչյուր 24 ամիսը մեկ (13+ տարեկան)
- Լրիվ և մասնակի պրոթեզներ - յուրաքանչյուր 5 տարին մեկ
- Պրոթեզների վերանորոգում և վերաբազմավորում - տարեկան երկու անգամ

Հեռաատամնաբուժական ծառայություններ

Հեռաատամնաբուժությունը ծառայություններ ստանալու միջոց է՝ առանց Ձեր ատամնաբույժի հետ նույն ֆիզիկական վայրում գտնվելու: Հեռաատամնաբուժությունը կարող է ներառել Ձեր բժշկի հետ ուղիղ զրույց կամ առանց ուղիղ զրույցի տվյալների փոխանակում Ձեր ատամնաբույժի հետ: Կարևոր է, որ Դուք և Ձեր ատամնաբույժը համաձայնեք՝ որոշակի ծառայության համար հեռաատամնաբուժության օգտագործումը հարմար է Ձեզ համար: Դուք կարող եք կապ հաստատել Ձեր ատամնաբույժի հետ՝ իմանալու, թե հեռաատամնաբուժության միջոցով ինչ տեսակի ծառայություններ կարող են հասանելի լինել:

Ոչ անհետաձգելի բժշկական փոխադրում

Դուք իրավասու եք օգտվել ոչ անհետաձգելի բժշկական փոխադրումից (NEMT), երբ ֆիզիկապես կամ բժշկական պատճառներով չեք կարողանում հասնել Ձեր բժշկական հանդիպմանը մեքենայով, ավտոբուսով, գնացքով կամ տաքսիով, և պլանով վճարվում է Ձեր ատամնաբուժական խնդիրը:

NEMT-ը շտապօգնության մեքենա, մանկական բեռնատար, անվասայակով բեռնատար կամ օդային տրանսպորտ է: NEMT-ը մեքենա, ավտոբուս կամ տաքսի չէ: [Health Net](#)-ը թույլատրում է ամենացածր գնով NEMT Ձեր ատամնաբուժական կարիքների համար, երբ Ձեզ անհրաժեշտ է տրանսպորտ Ձեր հանդիպմանը ներկա լինելու համար: Ինչը նշանակում է, օրինակ, եթե ֆիզիկապես կամ բժշկական պատճառներով կարող եք տեղափոխվել անվասայակով բեռնատարով, [Health Net](#)-ը չի վճարի շտապօգնության մեքենայի համար: Դուք իրավասու եք օգտվել օդային փոխադրումից միայն այն դեպքում, եթե Ձեր բժշկական խնդիրը անհնար է դարձնում ցամաքային փոխադրման որևէ ձև:

NEMT-ից պետք է օգտվել, երբ այն.

- Ֆիզիկապես կամ բժշկական ցուցումներով պահանջվում է, ինչպես որոշված է բժշկի կողմից տրված գրավոր դեղատոմսով: կամ
- Դուք ֆիզիկապես կամ բժշկական ցուցումներով չեք կարողանում օգտվել ավտոբուսից, տաքսիից, մեքենայից կամ միկրոավտոբուսից՝ Ձեր նշանակված հանդիպմանը հասնելու համար:
- Նախապես հաստատված է [Health Net](#)-ի կողմից՝ բժշկի կողմից տրված գրավոր դեղատոմսով:

NEMT-ի համար դիմելու համար զանգահարեք [Health Net](#) գրասենյակ [1-844-233-4522](tel:1-844-233-4522) հեռախոսահամարին Ձեր հանդիպումից առնվազն 10 աշխատանքային օր (երկուշաբթիից ուրբաթ) առաջ: Հրատապ հանդիպումների դեպքում խնդրում ենք զանգահարել հնարավորինս շուտ: Չանգահարելիս ձեռքի տակ ունեցեք Ձեր անդամի նույնականացման քարտը:

NEMT-ի սահմանափակումներ

[Health Net](#)-ի շրջանակներում ընդգրկված ատամնաբուժական հանդիպումների համար և դրանցից վերադառնալու համար NEMT ստանալու համար սահմանափակումներ չկան, երբ այն նշանակվել է մատակարարի կողմից:



Չանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

[1-855-388-6257](tel:1-855-388-6257) (TTY/TDD [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարով:

[Health Net](#)-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Չանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

Ի՞նչ չէ կիրառվում:

Եթե Ձեր ֆիզիկական և բժշկական վիճակը թույլ է տալիս Ձեզ հասնել Ձեր ատամնաբուժական այցին մեքենայով, ավտոբուսով, տաքսիով կամ հեշտ հասանելի տրանսպորտային այլ միջոցով: Տեղափոխում չի տրամադրվի, եթե ծառայությունը չի հատուցվում [Health Net](#)-ի կողմից: Ապահովագրվող ծառայությունների ցանկը նշված անդամի այս ձեռնարկում:

Անդամի կողմից վճար

[Health Net](#)-ի կողմից լիազորված փոխադրման դեպքում վճար չկա:

Ոչ բժշկական փոխադրում

Դուք կարող եք օգտվել ոչ բժշկական փոխադրումից (NMT), երբ.

- Գնում եք և հետ եք գալիս Ձեր մատակարարի կողմից նշանակված [Health Net](#)-ի ապահովագրված ծառայության համար նախատեսված հանդիպումից:

[Health Net](#)-ը թույլ է տալիս Ձեզ օգտվել մեքենայից, տաքսիից, ավտոբուսից կամ պետական/մասնավոր այլ միջոցից՝ պլանով ապահովագրված բժշկական ծառայությունների, ներառյալ մոդոների փոխհատուցումը, Ձեր ատամնաբուժական հանդիպմանը հասնելու համար, երբ փոխադրումը կատարվում է անդամի կողմից կազմակերպված մասնավոր մեքենայով, այլ ոչ թե փոխադրող միջնորդի միջոցով, ավտոբուսի անցագրերով, տաքսիի վաուչերներով կամ գնացքի տոմսերով: [Health Net](#)-ը թույլ է տալիս օգտվել Ձեր հանդիպման պահին Ձեր ատամնաբուժական կարիքների համար ամենացածր գնով NMT տեսակից:

NMT ծառայությունների համար դիմելու համար խնդրում ենք զանգահարել [Health Net](#) գրասենյակ [1-844-233-4522](tel:1-844-233-4522) հեռախոսահամարին՝ Ձեր հանդիպումից առնվազն 10 աշխատանքային օր (երկուշաբթի-ուրբաթ) առաջ կամ զանգահարել հնարավորինս շուտ, եթե ունեք անհետաձգելի այց: Չանգահարելիս պատրաստ ունեցեք Ձեր անդամի ID քարտը:

NMT-ի սահմանափակումներ

[Health Net](#)-ի շրջանակներում ընդգրկված ատամնաբուժական հանդիպումների համար և դրանցից վերադառնալու համար NMT ստանալու համար սահմանափակումներ չկան, երբ այն նշանակվել է մատակարարի կողմից:

Ի՞նչ չէ կիրառվում:

NMT չի կիրառվում, եթե.

- Ապահովագրված ծառայությանը հասնելու համար բժշկական ցուցումներով



Չանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

[1-855-388-6257](tel:1-855-388-6257) (TTY/TDD [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարով:

[Health Net](#)-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Չանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

պահանջվում է շտապօգնության մեքենա, պառկած բուժառուներ տեղափոխող մեքենա, անվասայլակով բեռնատար կամ NEMT-ի այլ ձև:

- Տեղափոխում չի տրամադրվի, եթե ծառայությունը չի հատուցվում **Health Net**-ի կողմից: Ապահովագրվող ծառայությունների ցանկը նշված անդամի այս ձեռնարկում:

Անդամի կողմից վճար

Health Net-ի կողմից լիազորված փոխադրման դեպքում վճար չկա:

Ֆանրային բուժաշխատողի (CHW) ծառայություններ

Եթե **Health Net**-ը հիմնավորում է Ձեր ծառայությունների մերժումները, ուշացումները, փոփոխությունները, դադարեցումները, կասեցումները կամ կրճատումները բժշկական անհրաժեշտության հիման վրա, Ձեր NOA-ն պետք է պարունակի հետևյալը.

- **Health Net**-ի կողմից մտադրված ձեռնարկվող գործողության հայտարարություն
- **Health Net**-ի որոշման պատճառների պարզ և հակիրճ բացատրություն
- **Health Net**-ի որոշման ուղիները, այդ թվում՝ **Health Net**-ի կիրառած կանոնները
- Որոշման պատճառները: **Health Net**-ը պետք է հստակ նշի, թե ինչպես Ձեր խնդիրը չի համապատասխանում կանոններին կամ ուղեցույցներին:

Թարգմանություններ

Health Net-ից պահանջվում է ամբողջությամբ թարգմանել և տրամադրել անդամների գրավոր տվյալներն ընդհանուր նախընտրելի լեզուներով, այդ թվում՝ բոլոր բողոքները և բողոքարկման ծանուցումները:

Ամբողջովին թարգմանված ծանուցումը պետք է ներառի **Health Net**-ի՝ մերժելու, հետաձգելու, փոփոխելու, դադարեցնելու, կասեցնելու կամ առողջապահական խնամքի ծառայությունները նվազեցնելու հայտի որոշման բժշկական պատճառը:

Եթե Ձեր նախընտրելի լեզվով թարգմանությունը հասանելի չէ, **Health Net**-ից պահանջվում է առաջարկել բանավոր օգնություն Ձր նախընտրելի լեզվով, որպեսզի կարողանաք հասկանալ Ձեզ տրամադրած տեղեկությունը:



Ձանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

1-855-388-6257 (TTY/TDD 1-800-466-7566) հեռախոսահամարով:

Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Ձանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

7. Հաղորդում և խնդիրների լուծում

Խնդիրների մասին հաղորդելու և դրանց լուծում տալու երկու եղանակ կա.

- Օգտվել **բողոքից** (կամ **դժգոհությունից**), երբ **Health Net**-ի կամ մատակարարի կամ մատակարարից ստացած ատամնաբուժական խնամքի կամ բուժման հետ կապված խնդիր ունեք:
- Օգտվել **բողոքարկումից**, երբ համաձայն չեք **Health Net**-ի՝ ծառայությունների համար չփոխհատուցելու որոշմանը

Դուք իրավունք ունեք բողոք և բողոքարկում ներկայացնելու **Health Net**-ին՝ Ձեր խնդրի մասին մեզ հայտնելու համար: Սա չի փոխարինում Ձեր օրինական իրավունքներից և պաշտպանական միջոցներից որևէ մեկը: Մենք նաև խտրականություն չենք դրսևորի կամ վրիժառություն չենք պահի Ձեր նկատմամբ՝ մեր դեմ բողոքելու համար: Ձեր խնդրի մասին մեզ տեղեկացնելը կօգնի մեզ բարելավել խնամքը բոլոր անդամների համար:

Դուք կարող եք նախ կապ հաստատել **Health Net**-ի հետ՝ խնդրի մասին մեզ տեղեկացնելու համար: **Չանգահարեք մեզ երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ առավոտյան 8:00 a.m.-ից մինչև 5:00 p.m. 1-844-233-4522 (TTY 1-800-466-7566 կամ 711) հեռախոսահամարին:** Ներկայացրեք մեզ Ձեր խնդրի մասին:

Եթե Ձեր բողոքը կամ բողոքարկումը դեռևս չի լուծվել 30 օր հետո, կամ Դուք դժգոհ եք արդյունքից, կարող եք զանգահարել Կալիֆորնիայի վերահսկվող առողջապահական խնամքի վարչությանը (DMHC): Խնդրեք DMHC-ին վերանայել Ձեր բողոքը կամ անցկացնել Անկախ բժշկական վերանայում (IMR): Եթե Ձեր հարցը հրատապ է, օրինակ՝ Ձեր առողջությանը սպառնացող լուրջ վտանգը, կարող եք անմիջապես զանգահարել DMHC-ին՝ առանց **Health Net**-ին նախնական բողոք կամ բողոքարկում ներկայացնելու: Կարող եք անվճար զանգահարել DMHC՝ 1-888-466-2219 (TTY 1-877-688-9891 կամ 711) հեռախոսահամարին: Կամ այցելեք նշված հղումով՝ <https://www.dmhc.ca.gov>:

Կալիֆորնիայի Առողջապահական խնամքի ծառայությունների (DHCS) Medi-Cal վերահսկվող խնամքի օմբուդսմենը նույնպես կարող է օգնել: Օմբուդսմենը կարող է օգնել չլուծված խնդիրների դեպքում՝ պլանին միանալու, փոփոխելու կամ հեռանալու հետ կապված խնդիրներ; և Medi-Cal-ի վերահսկվող խնամքի պլանի հետ կապված այլ խնդիրներ: Դուք կարող եք զանգահարել Օմբուդսմենին 1-888-452-8609 հեռախոսահամարին, երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ առավոտյան 8:00 a.m.-ից մինչև 5:00 p.m.:

Կարող եք նաև բողոք ներկայացնել Ձեր շրջանի իրավունակության գրասենյակ Ձեր Medi-Cal իրավունակության վերաբերյալ: Եթե վստահ չեք, թե ում կարող եք ներկայացնել Ձեր բողոքը, զանգահարեք **1-844-233-4522 (TTY 1-800-466-7566)** հեռախոսահամարին:



Չանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

1-855-388-6257 (TTY/TDD 1-800-466-7566) հեռախոսահամարով:

Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Չանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

Բողոքներ

Բողոքը (կամ դժգոհությունը) կարող է կապված լինել ցանցային մատակարարից ստացած ծառայության վերաբերյալ: Բողոքը կարող է լինել նաև [Health Net](#)-ի վերաբերյալ: Բողոքարկման և Նահանգային լուծման մասին տե՛ս ստորև: Կարող եք Ձեր բողոքը ներկայացնել Ձեր PCD-ի կամ [Health Net](#)-ի միջոցով:

Կարող եք ներկայացնել բողոք հեռախոսազանգի կամ փոստի միջոցով: Բողոք ներկայացնելու ժամանակային սահմանափակում չկա:

- **Հեռախոսազանգով՝** զանգահարեք [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին: Ներկայացրեք Ձեր ատամնաբուժական ծրագրի ID-ի համարը, Ձեր անունը և բողոքի պատճառը:
- **Փոստով՝** զանգահարեք [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին: Խնդրեք Ձեզ ուղարկել ձևաթուղթ: Երբ ստանաք ձևաթուղթը, լրացրեք այն: Համոզվեք, որ ներառել եք Ձեր անունը, ատամնաբուժական ծրագրի ID-ի համարը Ձեր բողոքի պատճառը: Նշեք, թե ինչ է տեղի ունեցել, և ինչպես կարող եք օգտակար լինել:

Ձևաթուղթը ուղարկեք նշված հասցեին:

[Health Net](#)

PO Box 10348

Woodland Hills, CA 91410-0348

- **Առցանց՝** Այցելեք [Health Net](#)-ի կայք նշված հղումով՝ www.hndental.com

Եթե Ձեր բողոքը ներկայացնելու համար օգնության կարիք ունենաք, մենք կօգնենք Ձզ: Մենք կարող ենք տրամադրել Ձեզ անվճար լեզվական ծառայություններ: Չանգահարեք [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին:

Ձեր բողոքը ստանալուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում մենք Ձեզ նամակ կուղարկենք՝ տեղեկացնելով, որ այն ստացել ենք: 30 օրվա ընթացքում մենք Ձեզ ևս մեկ նամակ կուղարկենք, որտեղ կտեղեկացնենք՝ ինչպես ենք լուծել ձեր խնդիրը:

Եթե ունեք հրատապ խնդիր, որը կապված է լուրջ առողջական խնդիրների հետ, մենք կսկսենք արագացված (արագ) վերանայում: Մենք որոշում կկայացնենք Ձեր բողոքը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում: Արագացված վերանայում խնդրելու համար զանգահարեք [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին:

Ձեր բողոքը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում մենք կորոշենք՝ ինչպես լուծում տալ Ձեր բողոքին, և արդյոք արագացնելու ենք այն: Եթե պարզենք, որ չպետք է արագացնենք Ձեր բողոքը, Ձեզ կտեղեկացնենք՝ տեղեկացնելով, որ Ձեր բողոքը կվերանայվի 30 օրվա



Չանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

[1-855-388-6257](tel:1-855-388-6257) (TTY/TDD [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարով:

[Health Net](#)-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Չանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

ընթացքում: Կարող եք անմիջական կապ հաստատել DMHC-ի հետ ցանկացած պատճառով, ներառյալ, եթե կարծում եք, որ Ձեր մտահոգությունը համապատասխանում է արագ վերանայմանը: [Health Net](#)-ը Ձեզ չի պատասխանում 72 ժամվա ընթացքում, կամ եթե դժգոհ եք [Health Net](#)-ի որոշումից:

Բողոքարկումներ

Բողոքարկումը տարբերվում է բողոքից: Բողոքարկումը [Health Net](#)-ի համար հայտ է՝ վերանայելու և փոփոխելու պահանջվող ծառայության ապահովագրության վերաբերյալ մեր կողմից ընդունված որոշումը: Եթե Ձեզ ուղարկել ենք Գործողության ծանուցման (NOA) նամակ, որում նշվում է՝ մենք մերժում, հետաձգում, փոխում կամ դադարեցնում ենք ծառայությունը, և Դուք համաձայն չեք մեր որոշմանը, կարող եք բողոքարկել, կամ Ձեր PCD-ն կարող է բողոքարկել Ձեր անունից: Ձեր PCD-ին նախ անհրաժեշտ կլինի ստանալ Ձեզնից ներկայացուցչության հաստատման (AOR) ձևաթուղթ՝ բողոքարկում ներկայացնելու գործընթացի համար:

Կարող եք բողոքարկել հեռախոսազանգի միջոցով, փոստով կամ առցանց: Պետք է բողոքարկեք Ձեր ստացած NOA-ի ամսաթվից հետո 60 օրացուցային օրվա ընթացքում:

Կարող եք բողոքարկում ներկայացնել հեռախոսազանգի միջոցով, գրավոր փոստով կամ առցանց.

- **Հեռախոսազանգով՝** զանգահարեք [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին: Նշեք Ձեր անունը, առողջապահական պլանի ID-ի համարը և բողոքարկվող ծառայությունը:
- **Փոստով՝** Ձևաթղթի պատճենը կարող եք գտնել [Health Net](#)-ի կայքի նշված հղումով՝ https://www.healthnet.com/content/healthnet/en_us/members/appeals-and-grievances/medi-cal-dental-appeals-and-grievances.html: Կամ կարող եք զանգահարել [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին և խնդրել, որ Ձեզ ուղարկեն ձևաթուղթը: Երբ ստանաք ձևաթուղթը, լրացրեք այն: Վստահ եղեք, որ ներառել եք Ձեր անունը, ատամնաբուժական պլանի ID-ի համարը և բողոքարկվող ծառայությունը:

Ձևաթուղթը ուղարկեք նշված հասցեին.

[Health Net](#)

PO Box 10348

Woodland Hills, CA 91410-0348

- **Առցանց՝** Այցելեք [Health Net](#)-ի կայք նշված հղումով՝ https://www.healthnet.com/content/healthnet/en_us/members/medi-cal.html

Եթե մեր ուղարկած ծանուցման մեջ նշված է, որ ծառայությունները կդադարեն, կարող եք շարունակել ստանալ ծառայություններ Ձեր բողոքարկման ընթացքում: Դրա համար Դուք կամ Ձեր PCD-ն պետք է ներկայացնի բողոքարկում՝ ծանուցումը Ձեզ փոստով ուղարկելու օրվանից հետո 10 օրվա ընթացքում: Պետք է մեզ տեղեկացնեք, որ ցանկանում եք շարունակել ստանալ ծառայություններ:



Ձանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

[1-855-388-6257](tel:1-855-388-6257) (TTY/TDD [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարով:

[Health Net](#)-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Ձանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

Եթե Ձեր բողոքարկումը ներկայացնելու հետ կապված օգնության կարիք ունենաք, կօգնենք Ձեզ այդ հարցում: Կարող եք տրամադրել Ձեզ անվճար լեզվական ծառայություններ: Չանգահարեք **1-844-233-4522** (TTY **1-800-466-7566**) հեռախոսահամարին:

Ձեր բողոքարկումը ստանալուց հետո 5 օրվա ընթացքում մենք նամակ կուղարկենք՝ տեղեկացնելով, որ ստացել ենք այն: 30 օրվա ընթացքում Ձեզ կհայտնենք բողոքարկման մեր որոշման մասին և կուղարկենք Ձեզ Բողոքարկման որոշման ծանուցման (NAR) նամակ: Եթե չտրամադրենք բողոքարկման մեր որոշումը 30 օրվա ընթացքում, կարող եք դիմել Նահանգային լուծման համար Կալիֆորնիայի սոցիալական ծառայությունների վարչությունից (CDSS) և Անկախ բժշկական վերանայում (IMR) DMHC-ից:

Եթե Դուք կամ Ձեր ատամնաբույժը ցանկանում է, որ արագացված որոշում կայացնենք, քանի որ Ձեր բողոքարկումը լուծելու համար պահանջվող ժամանակը վտանգի տակ կոնի Ձեր կյանքը, առողջությունը կամ գործելու ունակությունը, կարող եք դիմել արագացված (արագ) վերանայման համար: Արագացված վերանայման համար զանգահարեք **1-844-233-4522** (TTY **1-800-466-7566**) հեռախոսահամարին: Մենք որոշում կկայացնենք Ձեր բողոքարկումը ստանալուց հետո 72 ժամվա ընթացքում:

Նահանգային լուծման

Նահանգային լուծմանը հանդիպում է Կալիֆորնիայի սոցիալական ծառայությունների վարչության (DSS) մարդկանց հետ: Դատավորը կօգնի լուծում տալ Ձեր խնդրին: Կարող եք դիմել նահանգային լուծման համար միայն եթե ավարտել եք **Health Net**-ի շրջանակներում բողոքարկման գործընթացն ավարտելուց հետո և դեռ գոհ չեք որոշումից, կամ եթե 30 օր հետո չեք ստացել Ձեր բողոքարկման վերաբերյալ որոշումը:

Կարող եք դիմել նահանգային լուծման համար հեռախոսազանգով կամ փոստով: Պետք է դիմեք Նահանգային լուծման համար բողոքարկման որոշման մասին ծանուցման օրվանից հետո 120 օրացուցային օրվա ընթացքում: Ձեր PCD-ն կարող է Ձեր փոխարեն դիմել նահանգային լուծման համար, եթե ստանա հաստատում DSS-ից: Չանգահարեք DSS՝ խնդրելով նահանգին հավանություն տալ Նահանգային լուծման հայտի հեղինակ Ձեր PCD-ին:

Եթե մեր ուղարկած ծանուցման մեջ նշվում է, որ ծառայությունները կդադարեն, կարող եք շարունակել ստանալ ծառայություններ Նահանգային լուծման ընթացքում: Դրա համար Դուք կամ Ձեր PCD-ն պետք է դիմի Նահանգային լուծման համար ծանուցումը Ձեզ փոստով ուղարկելու օրվանից հետո 10 օրվա ընթացքում: Պետք է նշեք, որ ցանկանում եք շարունակել ստանալ ծառայություններ:

Հեռախոսով նահանգային լուծման համար դիմելու համար զանգահարեք Կալիֆորնիայի սոցիալական ծառայությունների վարչության (DSS) Հանրային արձագանքման բաժին՝ **1-800-952-5253** (TDD **1-800-952-8349**) հեռախոսահամարին:

Նահանգային լուծման համար փոստով դիմելու համար լրացրեք բողոքարկման լուծման ծանուցման հետ մեկտեղ ուղարկած ձևաթուղթը: Ուղարկեք այն նշված հասցեին:



Չանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

1-855-388-6257 (TTY/TDD **1-800-466-7566**) հեռախոսահամարով:

Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Չանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

California Department of Social Services State Hearings Division
P.O. Box 944243, MS 09-17-37
Sacramento, CA 94244-2430

Եթե Նահանգային լուծման ռիսկը կապված օգնության կարիք ունենաք, մենք կօգնենք Ձեզ: Կարող եմ տրամադրել անվճար լեզվական ծառայություններ: Չանգահարեք [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարին:

Լուծման ժամանակ դատավորին կպատմեք, թե ինչու չեք համաձայն [Health Net](#)-ի որոշմանը: Մենք դատավորին կներկայացնենք, թե ինչպես ենք կայացրել մեր որոշումը: Կարող է պահանջվել մինչև 90 օր, որպեսզի դատավորը Ձեր գործի հետ կապված որոշում կայացնի: [Health Net](#)-ը պետք է հետևի դատավորի որոշմանը:

Եթե ցանկանում եք, որ արագ որոշում կայացնենք, քանի որ Նահանգային լուծման անցկացնելու համար անհրաժեշտ ժամանակը կվտանգի Ձեր կյանքը, առողջությունը կամ լիարժեք գործելու ունակությունը, Դուք կամ Ձեր PCD-ն կարող եք դիմել DSS-ին: Կարող եք դիմել արագացված (արագ) Նահանգային լուծման համար: DSS-ը պետք է որոշում կայացնի Ձեր հայտը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե արդեն ունեցել եք Նահանգային լուծում, **չեք կարող** դիմել IMR-ի համար: Սակայն, եթե սկզբունդիմել եք IMR-ի համար և դժգոհ եք մնացել արդյունքից, դեռևս կարող եք դիմել Նահանգային լուծման համար:

Զեղծարարություն, վատնում և չարաշահում

Եթե կասկածում եք, որ մատակարարը կամ Medi-Cal ստացող անձը կատարել է զեղծարարություն, վատնում կամ չարաշահում, Ձեր իրավունքն ու պարտականությունն է հայտնել այդ մասին՝ զանգահարելով [1-800-822-6222](tel:1-800-822-6222) միջազգային անվճար հեռախոսահամարին կամ ներկայացնելով առցանց բողոք նշված հղումով՝ <https://www.dhcs.ca.gov/>.

Մատակարարի կողմից զեղծարարությունը, վատնումն ու չարաշահումը ներառում են.

- Ատամնաբուժական գրառումների փոփոխություն
- Ավելի շատ դեղամիջոցներ նշանակելը, քան բժշկական ցուցումներով է անհրաժեշտ
- Ավելի շատ ատամնաբուժական ծառայություններ մատուցելը, քան բժշկական ցուցումներով է անհրաժեշտ
- Չմատուցած ծառայությունների վճարման հաշվի ներկայացում
- Մասնագիտական ծառայությունների վճարման հաշվի ներկայացում, երբ մասնագետը չի կատարել ծառայությունը

Նպաստներ ստացող անձի կողմից զեղծարարությունը, վատնումն ու չարաշահումը ներառում են.

- Մեկ այլ անձի ատամնաբուժական պլանի նույնականացման քարտի կամ Medi-Cal նպաստների նույնականացման քարտի (BIC) գումարի դիմաց տրամադրում, վաճառք կամ տրամադրում
- Մեկից ավել մատակարարներից նմանատիպ կամ նույն բուժումը կամ դեղամիջոցները ստանալը
- Շտապօգնության սենյակ գնալը, երբ անհետաձգելի իրավիճակ չէ



Չանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

[1-855-388-6257](tel:1-855-388-6257) (TTY/TDD [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարով:

[Health Net](#)-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Չանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

- Մեկ այլ անձի Սոցիալական ապահովության համարանիշի կամ ատամնաբուժական պլանի ID-ի համարի օգտագործում

Ձեռնարարության, վատնումի և չարաշահման մասին հաղորդելու համար գրեք զեղծարարություն, վատնում կամ չարաշահում կատարած անձի անունը, հասցեն և ID համարը: Տվեք որքան կարող եք շատ տեղեկություններ տվյալ անձի մասին, օրինակ՝ հեռախոսահամարը կամ մասնագիտությունը, եթե այն մատակարար է: Ներկայացրեք իրադարձությունների ամսաթվերը և կատարվածի ճշգրիտ նկարագրության ամփոփումը:

Ուղարկեք Ձեր հաղորդումը նշված հասցեին.

Health Net
PO Box 2182
Milwaukee, WI 53201-2182

Կալիֆորնիայի Վերահսկվող առողջապահական խնամքի վարչությունը պատասխանատու է առողջապահական ծառայությունների պլանների կարգավորման համար: Եթե ունեք բողոք Ձեր առողջապահական պլանի վերաբերյալ, նախ պետք է զանգահարեք Ձեր առողջապահական պլանի պատասխանատուին (մուտքագրեք առողջապահական պլանի հեռախոսահամարը) և հետևեք Ձեր առողջապահական պլանի բողոքարկման գործընթացին՝ մինչ վարչության հետ կապ հաստատելը: Բողոքարկման այս ընթացակարգից օգտվելը չի արգելում Ձեզ համար հասանելի հնարավոր որևէ օրինական իրավասություն կամ պաշտպանական միջոցներ: Եթե Ձեր առողջապահական պլանով բավարար լուծում չստացած կամ ավելի քան 30 օր չլուծված որևէ անհետաձգելի խնդիր, դժգոհություն ներառող բողոքի հետ կապված օգնության կարիք ունենաք, կարող եք զանգահարել վարչության գրասենյակ օգնության համար: Կարող եք նաև իրավունակ լինել Անկախ բժշկական վերանայման (IMR) համար: Եթե իրավունակ եք IMR-ի համար, IMR գործընթացը կտրամադրի առաջարկվող ծառայության կամ բուժման բժշկական ցուցումներով անհրաժեշտության, փորձարարական կամ հետազոտական բնույթ կրող բուժման որոշումների և անհետաձգելի կամ հրատապ բժշկական ծառայությունների վճարման վեճերի հետ առնչվող առողջապահական պլանով կայացված բժշկական որոշումների արդար վերանայում: Վարչությունն ունի նաև անվճար հեռախոսահամար (1-888-466-2219) և TDD գիծ (1-877-688-9891) լսողության և խոսելու դժվարություն ունեցող անձանց համար: Վարչության ինտերնետային կայքում՝ www.dmh.ca.gov, կան բողոքի ձևաթղթեր, IMR դիմումի ձևեր և առցանց հրահանգներ



Ձանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

1-855-388-6257 (TTY/TDD 1-800-466-7566) հեռախոսահամարով:

Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Ձանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

8. Կարևոր հեռախոսահամարներ և օգտագործված բառապաշար

Կարևոր հեռախոսահամարներ

- **Health Net** Անդամի ծառայությունների բաժին՝ [1-844-233-4522](tel:1-844-233-4522) (TTY [1-800-466-7566](tel:1-800-466-7566))
- Medi-Cal ատամնաբուժական շահառուներ՝ 1-800-322-6384 (TTY 1-800-735-2922)
- DMHC աջակցության կենտրոն՝ 1-888-466-2219
- Առողջապահական խնամքի տարբերակներ – Medi-Cal վերահսկվող խնամք՝ 1-800-430-4263
- Health Consumer Alliance՝ 1-888-804-3536
- Medi-Cal իրավունակության համար՝ 1-800-541-5555
- Medi-Cal արդար լսումներ՝ 1-800-952-5253 (TTY 1-800-952-8349)
- Medi-Cal վերահսկվող խնամք՝ 1-800-430-4263 (TTY 1-800-430-7077)
- Medi-Cal օմբուդսմեն՝ 1-888-452-8609



Չանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին
[1-855-388-6257](tel:1-855-388-6257) (TTY/TDD [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարով:

Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Չանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց
նշված հղումով՝ www.hndental.com:

Օգտագործված բառապաշար

Ամերիկյան հնդկացի՝ Անհատ, ով համապատասխանում է դաշնային օրենքի 42 CFR 438.14 բաժնի «հնդկացի» սահմանմանը. ըստ որի՝ անձը սահմանվում է որպես «հնդկացի», եթե համապատասխանում է նշվածներից որևէ մեկին.

- Դաշնային մակարդակով ճանաչված հնդկական ցեղի անդամ է:
- Բնակվում է քաղաքի կենտրոնում և համապատասխանում է նշվածներից մեկին կամ մի քանիսին.
- Նշվածների անդամ է՝ ցեղի, խմբավորումների կամ հնդկացիների այլ կազմակերպված խմբի, այդ թվում՝ 1940թ.-ից դադարեցված ցեղերի, խմբավորումների կամ խմբերի, նաև այս պահին ճանաչված կամ հետագայում իրենց բնակության նահանգի կողմից ճանաչվող ցեղերի, խմբավորումների կամ խմբերի, կամ ով նման որևէ անդամի առաջին կամ երկրորդ աստիճանի հետևորդ է
- Էսկիմոս կամ ալեուտ կամ Ալյասկայի այլ բնիկ է
- Ներքին գործերի նախարարի կողմից որևէ նպատակով համարվում է հնդկացի:
- Ներքին գործերի նախարարի կողմից հրապարակված կանոնակարգերի համաձայն՝ համարվում է հնդկացի

Բողոքարկում՝ Անդամի հայտ, որով դիմում է [Health Net](#)-ին վերանայել և փոխել պահանջված ծառայության հատուցման վերաբերյալ կայացրած որոշումը: Բողոքարկում կարող է ներկայացվել Ձեր ատամնաբույժի կողմից:

Կիրառելի՝ Կիրառվում է կամ վերաբերում է ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի վրա ազդեցություն ունենալուն:

Հաստատում՝ տե՛ս Նախնական հաստատում:

Հաշվի դուրսգրում՝ Ատամնաբույժի փաստացի վճարի և [Health Net](#)-ի կողմից վճարված գումարի տարբերության համար բուժառուին հաշվի դուրսգրում: Բացառությամբ համավճարների և ծախսերի մասնաբաժնի՝ հաշվի դուրսգրում չի թույլատրվում հատուցվող ծառայությունների համար:

Շահառու՝ Տե՛ս «Անդամ» բաժինը:

Շահառուի նույնականացման քարտ (BIC)՝ Առողջապահական ծառայությունների վարչության կողմից անդամներին տրամադրվող Medi-Cal-ի նույնականացման քարտը: BIC-ը ներառում է շահառուի համարը և այլ կարևոր տվյալներ:

Նպաստներ՝ [Health Net](#)-ի ատամնաբույժի կողմից մատուցվող ատամնաբուժական ծառայություններ, որոնք հասանելի են Medi-Cal Dental-ի միջոցով:



Ձանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

[1-855-388-6257](tel:1-855-388-6257) (TTY/TDD [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարով:

[Health Net](#)-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Ձանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

California Children Services (CCS, Կալիֆորնիայի երեխաների ծառայություններ) ծրագիր՝ Հանրային առողջապահական ծրագիր, որը մատուցում է մասնագիտացված ախտորոշիչ, բուժման և թերապևտիկ ծառայություններ 21 տարեկանից ցածր իրավունակ երեխաներին, ովքեր ունեն պետական կանոնակարգերի համաձայն CCS-ի իրավունակության համար առողջական խնդիրներ, հիվանդություններ կամ քրոնիկ առողջական խնդիրներ:

Կարիես՝ Ատամների ոսկրափուտի կամ խոռոչների համար օգտագործվող մեկ այլ եզրույթ:

Կլինիկական սքրինինգ՝ Ատամաբույժի կողմից կատարվող հետազոտություն՝ [Health Net](#)-ի մեկ այլ ատամաբույժի կողմից առաջարկվող կամ տրամադրվող բուժման նպատակահարմարության վերաբերյալ կարծիք կազմելու համար: [Health Net](#)-ը կարող է պահանջել կլինիկական սքրինինգ որոշ հանգամանքներում:

Բողոք՝ Անդամի դժգոհության բանավոր կամ գրավոր արտահայտումը, այդ թվում՝ ցանկացած վեճի, վերանայման հայտի կամ Ձեր կողմից կամ ատամաբույժի կողմից Ձեր անունից կատարած բողոքարկման ձևով: Բողոքը կարող է ներկայացվել նաև Ձեր ներկայացուցչի կողմից: Բողոքը նույն դժգոհությունն է:

Բուժօգնության անընդհանրություն՝ Անդամի՝ Medi-Cal ծառայություններ ստանալ շարունակելու հնարավորությունը ցանցից դուրս իրենց գործող մատակարարից մինչև 12 ամիս, եթե մատակարարը և [Health Net](#)-ը համաձայնեն:

Նպաստների կոորդինացում (COB)՝ Որոշման գործընթացը, թե որ Ապահովագրական հատուցումն (Medi-Cal, Medicare, առևտրային ապահովագրություն կամ այլ) ունի առաջնային բուժման և վճարման պարտականություններ մեկից ավել ապահովագրական հատուցում ունեցող անդամների համար:

Համավճար՝ Շահառուի կողմից վճարվող ատամաբույժի վճարի մի փոքր մասնաբաժին:

Ապահովագրության ծառայություններ՝ Medi-Cal ծառայություններ, որոնց վճարման համար պատասխանատու է [Health Net](#)-ը: Ապահովագրության ծառայությունները ենթակա են Medi-Cal պայմանագրի, պայմանագրի որևէ փոփոխության պայմաններին, դրույթներին, սահմանափակումներին և բացառություններին և ինչպես նշված է Անդամների սույն ձեռնարկում (նաև հայտնի որպես Ապահովագրված անձի համալիր տեղեկագիրք (EOC) և Տվյալների բացահայտման ձևաթուղթ): [Health Net](#):

DHCS՝ Կալիֆորնիայի առողջապահական ծառայությունների վարչություն: Այն Medi-Cal Dental պլանը վերահսկող պետական գրասենյակ է:

Դուրս գալ՝ Դադարել օգտվել ատամաբուժական պլանից, քանի որ անդամն այլևս չի համապատասխանում որակավորմանը կամ անցում է կատարում ատամաբուժական նոր պլանի: Անդամը պետք է ստորագրի ձևաթուղթ, որտեղ նշվում է՝ այլևս չի ցանկանում օգտվել ատամաբուժական պլանից, կամ պետք է զանգահարի Health Care Options գրասենյակ և դուրս գա պլանից հեռախոսազանգի միջոցով:

DMHC՝ Վերահսկվող խնամքի Կալիֆորնիայի վարչությունը: Այն վերահսկվող խնամքը և



Չանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

[1-855-388-6257](tel:1-855-388-6257) (TTY/TDD [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարով:

[Health Net](#)-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Չանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

ատամնաբուժական պլանները վերահսկող պետական գրասենյակ է:

Վերահսկվող ատամնաբուժական խնամքի պլան՝ Medi-Cal ատամնաբուժական խնամք, որն օգտվում է միայն որոշակի ատամնաբույժների, ատամնաբուժական մասնագետների, մատակարարների, կլինիկաների և հիվանդանոցների ծառայություններից այդ պլանում ընդգրկված Medi-Cal-ի ստացողների համար: **Health Net**-ը վերահսկվող խնամքի ատամնաբուժական պլան է:

Ատամնաբուժական մասնագետ՝ Մասնագիտացված խնամք տրամադրող ատամնաբույժ, այդ թվում՝ Էնդոդոնտիայի, բերանի խոռոչի վիրաբուժության, մանկական ատամնաբուժության, պարոդոնտիայի և օրթոդոնտիայի (բրեկետներ) ծառայություններ:

Վաղ և պարբերական հետազոտություն, ախտորոշում և բուժում (EPSDT)՝ Դաշնային ծրագիր, որը պահանջում է առողջապահական խնամք 21 տարեկանից ցածր երեխաների համար՝ պարբերական հետազոտության, ախտորոշման և բուժման ծառայությունների միջոցով: Ատամնաբուժական խնամքը ներառված է EPSDT ծրագրում: Խնդրում ենք ծանոթանալ նաև «Medi-Cal երեխաների և դեռահասների համար» բաժնին:

Իրավունակություն՝ Վերաբերում է Medi-Cal-ի նպաստներ ստանալու պահանջներին համապատասխանելուն:

Անհետաձգելի բուժօգնություն՝ Ատամնաբուժական հետազոտություն և/կամ գնահատում **Health Net**-ի ատամնաբույժի կամ ատամնաբուժական մասնագետի կողմից՝ որոշելու անհետաձգելի ատամնաբուժական խնդրի առկայությունը և տրամադրելու խնամք՝ որևէ անհետաձգելի ախտանիշ հաստատության կարողությունների շրջանակում և խնամքի մասնագիտորեն ճանաչված չափանիշների շրջանակներում բուժելու համար:

Անհետաձգելի ատամնաբուժական խնդիր՝ Ատամնաբուժական խնդիր, որը անհապաղ միջոցներ չձեռնարկելու դեպքում կարող է տրամաբանորեն հանգեցնել անհատի առողջությանը վտանգելուն՝ առաջացնելով ուժեղ ցավ կամ պատճառ դառնալով վատթարացող գործառնություն:

Էնդոդոնտիստ՝ Ատամնաբույժ, ով սահմանափակում է իր պրակտիկան ատամի միջուկի և արմատի հիվանդությունների և վնասվածքների բուժումով:

Հաստատված բուժառու՝ Բուժառու, ով ունի արդեն իսկ գոյություն ունեցող հարաբերություններ մատակարարի հետ և այցելել է այդ մատակարարին առողջապահական պլանով սահմանված պարբերականությամբ:

Բացառում՝ Վերաբերում է Medi-Cal Dental-ի շրջանակում ոչ հասանելի ատամնաբուժական պրոցեդուրային կամ ծառայությանը:

Չեղծարարություն՝ Դիտավորյալ գործողություն զեղծարարության կամ խաբեության մասին իմացող անձի կողմից այն դեպքում, երբ անձը գիտի՝ խաբեությունը կարող է հանգեցնել տվյալ



Ձանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

1-855-388-6257 (TTY/TDD 1-800-466-7566) հեռախոսահամարով:

Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Ձանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահսկողովող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

անձի կամ մեկ ուրիշի համար չարտոնված որևէ նպաստի:

Դժգոհություն՝ Անդամի դժգոհության բանավոր կամ գրավոր արտահայտումը, այդ թվում՝ ցանկացած վեճի, վերանայման հայտի կամ Ձեր կողմից կամ ատամնաբույժի կողմից Ձեր անունից կատարած բողոքարկման ձևով: Ցանցի մատակարարի վերաբերյալ **Health Net**-ին ներկայացված բողոքը դժգոհության օրինակ է:

Նույնականացում՝ Վերաբերում է որևէ փաստաթղթի, որն ապացուցում անձի ով լինելը, օրինակ՝ վարորդական իրավունքը:

Սահմանափակումներ՝ Վերաբերում է թույլատրելի ծառայությունների քանակին, թույլատրելի ծառայության տեսակին և/կամ ատամնաբուժական առավել մատչելի ծառայությանը:

Medi-Cal ատամնաբույժ՝ Ատամնաբույժ, ով ստացել է հաստատում Medi-Cal-ի շահառուներին ապահովագրվող ծառայություններ մատուցելու համար:

Medi-Cal երեխաների և դեռահասների համար՝ Նպաստ 21 տարեկանից ցածր Medi-Cal անդամների համար՝ պարբերական հետազոտության, ախտորոշման և բուժման ծառայությունների միջոցով: Նպաստը հայտնի է որպես Վաղ և պարբերական հետազոտություն, ախտորոշում և բուժում (EPSDT)՝ նպաստ՝ դաշնային օրենքի ներքո: Ատամնաբուժական խնամքը ներառված է EPSDT ծրագրում:

Բժշկական ցուցումներով պահանջվող՝ Ապահովագրվող ծառայություններ, որոնք անհրաժեշտ և տեղին են ատամների, լնդերի և հենարանային կառույցների բուժման համար, և որոնք (ա) մատուցվում են պրակտիկայի մասնագիտորեն ճանաչված ստանդարտների համաձայն; (բ) որոշվում են բուժող ատամնաբույժի կողմից ատամնաբուժական խնդրին համապատասխան; և (գ) ծառայության ամենահամապատասխան տեսակը, մատակարարումը և մակարդակն են՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերը, օգուտները և ապահովագրվող այլընտրանքային ծառայությունները:

Անդամ՝ **Health Net**-ում գրանցված Medi-Cal-ի ցանկացած իրավունակ անդամ, ով իրավունք ունի ստանալ ապահովագրվող ծառայություններ:

Չապահովագրվող ծառայություն՝ Ատամնաբուժական պրոցեդուրա կամ ծառայություն, որն ապահովագրվող նպաստ չէ:

Ոչ բժշկական փոխադրում՝ Փոխադրում Անդամի մատակարարի կողմից լիազորված Medi-Cal ապահովագրվող ծառայության համար նշանակված հանդիպման գնալու և այնտեղից վերադառնալու համար:

Չգրանցված ատամնաբույժ՝ Ատամնաբույժ, ով գրանցված չէ Medi-Cal-ում և իրավասու չէ մատուցել ծառայություններ Medi-Cal-ի իրավունակ շահառուներին:

Թույլտվության ծանուցում (NOA)՝ Համակարգչով ստեղծված ձևաթուղթ, որն ուղարկվում է ատամնաբույժներին՝ ի պատասխան ծառայությունների թույլտվության նրանց հայտի: (Տե՛ս



Ձանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

1-855-388-6257 (TTY/TDD 1-800-466-7566) հեռախոսահամարով:

Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Ձանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

Բուժման թույլտվության հայտը):

Այլ առողջապահական հատուցում / Այլ առողջապահական ապահովագրություն՝ Ատամնաբուժական ծառայությունների ապահովագրություն, որը կարող էք ունենալ որևէ մասնավոր ատամնաբուժական պլանի, ապահովագրական ծրագրի, որևէ այլ նահանգային կամ դաշնային ատամնաբուժական ծրագրի կամ այլ պայմանագրային կամ օրինական իրավասության ներքո:

Դիմաձևոտային վիրաբույժ՝ Ատամնաբույժ, ով սահմանափակում է իր պրակտիկան բերանի խոռոչի, ծնոտի և դիմային հիվանդությունների, վնասվածքների, դեֆորմացիաների, թերությունների և արտաքին տեսքի ախտորոշումով և վիրաբուժական միջամտությամբ:

Օրթոդոնտ՝ Ատամնաբույժ, ով սահմանափակում է իր պրակտիկան կծվածքի կամ ծամելու ժամանակ վերին և ստորին ատամնաշարի դասավորության խնդիրների կանխարգելումով և բուժումով:

Ցանցից դուրս մատակարար՝ [Health Net](#) ցանցի մաս չկազմող մատակարար:

Պալիատիվ խնամք՝ Բուժում, որը թեթևացնում է ցավը, սակայն չի շտկում ցավի պատճառ հանդիսացող խնդիրը կամ ծառայում է միայն որպես ժամանակավոր լուծում:

Գրանցված ատամնաբուժական մատակարար՝ Medi-Cal-ում գրանցված մատակարար, որը մատուցում է ատամնաբուժական ծառայություններ Պլանի անդամին:

Մանկական ատամնաբույժ՝ Ատամնաբույժ, ով սահմանափակում է իր պրակտիկան ծնունդից մինչև պատանեկության տարիք երեխաներին բուժելով՝ մատուցելով կանխարգելիչ խնամքի առաջնային և ամբողջական բուժում:

Պարոդոնտոլոգ՝ Ատամնաբույժ, ով սահմանափակում է իր պրակտիկան ատամների շուրջ լնդերի և հյուսվածքների հիվանդությունների բուժումով:

Պլան՝ Տե՛ս «Ատամնաբուժական վերահսկվող խնամքի պլան» բաժինը:

Ապահովագի՝ Գումար, որն անձը պետք է ամսական վճարի ատամնաբուժական ապահովագրության համար: Պլանի անդամները պարտավոր չեն վճարել ապահովագին:

Նախնական հաստատում (Նախնական թույլտվություն)՝ [Health Net](#)-ի ատամնաբույժի կողմից հայտ՝ մինչև ծառայությունների կատարումը հաստատում ստանալու համար: Հաստատված ծառայությունների համար ատամնաբույժները ստանում են թույլտվության ծանուցում (NOA) [Health Net](#)-ից:

Պրոցեդուրայի կոդ՝ Կոդի թիվ, որը նույնականացնում է մասնավոր բժշկական կամ



Ձանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

1-855-388-6257 (TTY/TDD **1-800-466-7566**) հեռախոսահամարով:

[Health Net](#)-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Ձանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

ատամնաբուժական ծառայություն

Օրթոպեդ-ատամնաբույժ՝ Ատամնաբույժ, ով սահմանափակում է իր պրակտիկան բացակայող ատամները պրոթեզներով, կամուրջներով կամ այլ փոխարինող մասերով փոխարինելով:

Մատակարար՝ Անհատ ատամնաբույժ, Այլընտրանքային պրակտիկային դիպլոմավորված ատամնաբույժ-հիգիենիստ (RDHAP), ատամնաբուժական խումբ, ատամնաբուժական դպրոց կամ ատամնաբուժական կլինիկա՝ ընդգրկված Medi-Cal ստոմատոլոգիական ծրագրում Medi-Cal-ի շահառուներին առողջապահական խնամքի և/կամ ատամնաբուժական ծառայություններ մատուցելու համար:

Մատակարարների ցանկ՝ [Health Net](#) ցանցի բոլոր մատակարարների ցանկը:

Ուղեգիր՝ Երբ Ձեր PCP-ն նշում է, որ կարող եք ստանալ խնամք մեկ այլ մատակարարից: Ապահովագրված որոշ խնամքի և ծառայությունների համար պահանջվում է ուղեգիր և նախնական հաստատում:

Պահանջներ՝ Վերաբերում է այնպիսի կետերի, որոնք պետք է կատարեք, կամ այնպիսի կանոնների, որոնց պետք է հետևեք:

Պարտականություն՝ Վերաբերում է այնպիսի գործողությունների, որոնք պետք է կատարեք, կամ ակնկալվում է՝ կկատարեք:

Rural Health Clinic (RHC) կենտրոն՝ Առողջապահական կենտրոն այնպիսի տարածքում, որը շատ մատակարարներ չունի: Անդամները կարող են ստանալ կանխարգելիչ խնամք RHC-ում:

Ծառայության տարածք՝ [Health Net](#)-ի սպասարկման աշխարհագրական տարածքը: Այն ներառում է Սակրամենտո և Լոս Անջելես շրջանները:

Ծախսերի մասնաբաժին՝ Առողջապահական ծախսերի այն մասնաբաժինը, որը շահառուն պետք է վճարի կամ կխոստանա վճարել՝ նախքան Medi-Cal-ի կողմից տվյալ ամսվա համար որևէ վճարում կատարելը:

Ստորագրություն՝ Վերաբերում է Ձեր ձեռագրով գրված Ձեր անունին:

Նահանգային լսում՝ Նահանգային լսումը իրավական գործընթաց է, որը հնարավորություն է տալիս շահառուներին դիմել որևէ մերժված կամ փոփոխված Բուժման թույլտվության հայտը (TAR) վերազնադատելու համար: Այն նաև թույլ է տալիս շահառուին կամ ատամնաբույժին փոխհատուցման գործի վերազնադատման հայտ ներկայացնել:

Բուժման թույլտվության հայտ (TAR)՝ [Health Net](#)-ի ատամնաբույժի կողմից ներկայացված



Ձանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

[1-855-388-6257](tel:1-855-388-6257) (TTY/TDD [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարով:

[Health Net](#)-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Ձանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

հայտ՝ ապահովագրվող որոշակի ծառայությունների հաստատման համար՝ նախքան բուժումը սկսելը: TAR պահանջվում է որոշակի ծառայությունների համար և հատուկ հանգամանքներում:

TAR/Պահանջի ձևաթուղթ՝ Ատամնաբույժի կողմից օգտագործվող ձևաթուղթ ծառայություն կատարելու կամ կատարված ծառայության համար վճարում ստանալու թույլտվության համար:

Շտապ խնամք (կամ շտապ ծառայություններ)՝ Ատամնաբուժական խնամք պահանջող ոչ անհետաձգելի հիվանդության, վնասվածքի կամ խնդրի բուժման համար մատուցվող ծառայություններ: Անդամները կարող են ստանալ շտապ օգնություն ցանցից դուրս մատակարարից, եթե ցանցային մատակարարները ժամանակավորապես հասանելի չեն:



Ձանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին

1-855-388-6257 (TTY/TDD 1-800-466-7566) հեռախոսահամարով:

Health Net-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Ձանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց

նշված հղումով՝ www.hndental.com:

HN3438 LA (4.25) HBARM



Ձանգահարեք Անդամների ծառայությունների սպասարկման բաժին
[1-855-388-6257](tel:1-855-388-6257) (TTY/TDD [1-800-466-7566](tel:1-800-466-7566)) հեռախոսահամարով:

[Health Net](#)-ն աշխատում է երկուշաբթիից ուրբաթ օրերին և ժամը 8:00 am-ից մինչև 5:00 pm PST:

Ձանգն անվճար է:

Կամ զանգահարեք Կալիֆորնիայի վերահաղորդվող գծին 711 համարով: Այցելեք առցանց
նշված հղումով՝ www.hndental.com: